

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ – BOOK REVIEW

ԱՆՆԱ ԱՍՍՏՏՐՅԱՆ

*Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր*

*instart@sci.am*

**ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆ, Բայրոնը և հայ իրականությունը**

**(հայերեն և անգլերեն),**

**Երևան, ԵՊՀ հրատ., 2013, 404 էջ:**

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հայկական մատենաշարով Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը 2013-ի վերջերին լույս է բնծայել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Բեքարյանի «Բայրոնը և հայ իրականությունը» (հայերեն և անգլերեն) մենագրությունը, որը հանրագումարի է բերում հեղինակի ավելի քան երեսուն տարվա ուսումնասիրությունների, հայ և օտար մամուլում տպագրված աշխատանքների, հանրապետական և միջազգային գիտաժողովներում ունեցած զեկուցումների արդյունքները: Մեծ Բրիտանիայի Նոթինգեմի համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Ա. Քարդվելի կարծիքով՝ Ա. Բեքարյանի «հոգվածները լուրջ ներդրում են բայրոնագիտության մեջ, ինչպես նաև տարբեր ազգերի մշակույթների համադրման բնագավառում», իսկ «բանասիրության միջազգային դաշտում դոկտոր Բեքարյանը դասվում է ընտրյալ մասնագետների խմբին»:

Գաղտնիք չէ, որ հայ գրականագիտությունը զբաղվել է ոչ միայն Բայրոնի ստեղծագործությամբ, այլև, թերևս, ավելի շատ նրա և Վենետիկի Մխիթարյանների առնչություններով: Թեև հայոց լեզուն ուսումնասիրելու բանաստեղծի ձգտումը, գիտական և թարգմանչական ոլորտներում նրա համագործակցությունը Մխիթարյանների հետ հայ գրականագետների համար դարձան անսպառ աղբյուր, սակայն մինչ օրս հայ պատմաբանասիրության մեջ գոյություն չունեն Բայրոնի և հայ իրականության առնչություններին վերաբերող բազմակողմանի, կատարյալ և լուրջ գիտական հետազոտություն: Ա. Բեքարյանի կատարած զգալի ու նշանակալից աշխատանքը լրացնում է այդ բացը: Իր առջև դրված խնդիրների, դրանց լուծման հետ կապված դժվարությունների պատկերացումը և վերջնական նպատակի հստակ գիտակցումը հեղինակին հնարավորություն են բնծե-

ռել ինքնություն մոտեցում ձևավորելու հետազոտության մեթոդաբանական հիմքի առնչությամբ և որպես ելակետ ընդունելու սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունն ու համատեքստային, համեմատական, գրականագիտական և մատենագիտական վերլուծության մեթոդների համալիր կիրառությունը: Փաստորեն, հայ գրականագիտության մեջ առաջին անգամ հստակորեն ներկայացվել է հայ բայրոնագիտության անցած արգասավոր ուղին, բանաստեղծի երկերի թարգմանության, Մխիթարյանների և ընդհանրապես հայ մամուլի հրապարակումների, հայ և օտարազգի հեղինակների ուսումնասիրությունների ամբողջական պատկերը:

Ա. Բեքարյանի մենագրությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ծավալուն ցանկից, որը հայկական աղբյուրներից բացի ընդգրկում է նաև անգլիական, ռուսական և ֆրանսիական աղբյուրներ, և չորս հավելվածից:

Աշխատության առաջին գլխում՝ «Բայրոնը և Վենետիկի Մխիթարյանները» Ա. Բեքարյանն անդադարձել է Բայրոնի և Վենետիկի Մխիթարյանների առնչություններին, Մխիթարյանների կողմից Բայրոնի երկերի հրատարակումներին, ինչպես նաև օտարազգի հեղինակների՝ Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին վերաբերող աշխատություններին: Ա. Բեքարյանը կատարել է համակողմանի ուսումնասիրություն՝ հենվելով հիմնականում սկզբնաղբյուրների վրա: Աշխատության մեջ առաջին անգամ մանրագնին ու հանգամանալից քննվել են օտարազգի հեղինակների (Անգլիա, Ռուսաստան, Ֆրանսիա, ԱՄՆ, Կանադա, Ուելս, Իտալիա, Ավստրալիա և այլն) աշխատություններում (ընդ որում, ոչ միայն գիտական, այլև գեղարվեստական գրականության մեջ) զետեղված՝ Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններին, նրա և Մխիթարյանների առնչություններին վերաբերող նյութերը: Առաջին անգամ բացահայտվել և ճշգրտվել են Բայրոնի կյանքի և գրական գործունեության վերաբերյալ հայ մամուլում տեղ գտած որոշ սխալներ և անճշտություններ:

Մենագրության երկրորդ գլխում՝ «Բայրոնի «հայկական» նամականին» և հայագիտությունը Եվրոպայում XVIII–XIX դարերում», հեղինակը քննել է Բայրոնի հարուստ նամականին, առանձնահատուկ ուշադրություն դարձրել Բայրոնի հայերին վերաբերող նամակների վրա: Ուսումնասիրելով Բայրոնի «հայկական» նամականին և անդրադառնալով XVIII–XIX դարերում Եվրոպայում հայագիտության զարգացման գործում նամականու կատարած դերին, Ա. Բեքարյանը ներկայացնում է ամբողջական եվրոպական հայագիտական համատեքստը և համոզիչ կերպով գնահատում Բայրոնի և նրա հայագիտական ուսումնասիրությունների դերը այդ համատեքստում:

Այս Կոստանտնուպոլսի.  
 Բարձր Բարձր Գաղութի Դատարանի  
 Երկրի Երկրի Զարգ. Զարգ.  
 Գաղութի Գաղութի Զարգ. Զարգ.  
 Զարգ. Զարգ. Զարգ. Զարգ.

Լուսին Բարձր

Մենագրության երրորդ գլուխը՝ «Հայ գրական-հասարակական միտքը Բայրոնի մասին» գրված է բանասիրական նուրբ դիտողականությամբ և նվիրված է այն բազմաթիվ արձագանքներին, որոնցով հայ բանաստեղծները և պարբերական մամուլը գնահատել են հանճարեղ ռոմանտիկին՝ հոգվածների, ներբողների և ուսումնասիրությունների տեսքով, ինչպես նաև Բայրոնի գրված այն յուրահատուկ հատկանիշներին, որոնք արտացոլվել են հայ քնարերգության մեջ: Ջուզապեթներ են անցկացվել Բայրոնի և որոշ հայ բանաստեղծների ստեղծագործությունների միջև:

Ամփոփելով, նշենք, որ Անահիտ Բեքարյանի «Բայրոնը և հայ իրականությունը» (հայերեն և անգլերեն) մենագրությունը կարևոր ներդրում է ինչպես հայ, այնպես էլ միջազգային Բայրոնագիտության մեջ:

Առանձնապես կարևոր նշանակություն ունի նաև այն փաստը, որ Ա. Բեքարյանի աշխատությունը շարադրված է երկու լեզվով, իսկ հավելվածներում զետեղվել են հատվածներ Բայրոնի նամակներից և Թոմաս Մուրի «Լորդ Բայրոնի կյանքը, նամակները և օրագրերը» գրքից, «Հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկի» համար Բայրոնի գրած առաջաբանը և հայերենից կատարած նրա թարգմանությունները: Դա օտարազգի բնութեցողին ևս հնարավորություն է տալիս ծանոթանալու Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններին, նրա և Մխիթարյանների առնչություններին վերաբերող նյութերին:

Գրքում զետեղված են մի շարք նկարների վերատպություններ, լուսանկարներ, գրքերի տիտղոսաթերթեր, Բայրոնի հայերեն ձեռագրի և հայերեն ստորագրության պատճեններ:

Բայրոնի հայերեն ձեռագիրը և հայերեն ստորագրությունը

Byron's Armenian handwriting and signature

Ի դեպ՝ գրախոսվող աշխատության որոշ դրվագներ կրճատված տարբերակով ներկայացված են նույն թվականին լույս տեսած հեղինակի մյուս գրքում՝ «Բայրոնի «հայկական» նամականին» (հայերեն և անգլերեն, Երևան, «Զանգակ» հրատ., 2013, 280 էջ):

**ANNA ASATRYAN**  
*Doctor of Art History, professor*  
*instart@sci.am*

**ANAHIT BEKARYAN, *Byron and the Armenian Reality*  
(in Armenian and English), Yerevan, Yerevan State  
University, 2013, 404 pages.**

Yerevan State University Publishing House has recently published *Byron and the Armenian Reality*, a monograph in English and Armenian by Anahit Bekaryan, PhD of Philology, a senior research worker at the department of Diaspora studies and International Relations at the Institute of Arts. The book that was published by the resolution of the Academic Board of the Institute of Arts of NAS RA in the Armenian series of Calouste Gulbenkian Foundation, comprises the results of the author's thirty-year-long research published in Armenian and foreign press and presented at local and international conferences.

As Professor Richard A. Cardwell from the UK University of Nottingham puts it, Anahit Bekaryan's "essays make a serious contribution to Byron scholarship and to the study of cross-cultural contexts," and "Dr. Bekaryan stands with a select group of specialists in the international field of scholarship."

Obviously, Armenian literary critics have been more engaged in research on Byron's affinities with the Mechitarists in Venice, rather than his work. The poet's wish to study Armenian and his collaboration with the Mechitarists have definitely been an infinite source of inspiration for the Armenian literary critics. At the same time, there was no extensive, versatile, and complete research conducted on the poet's links with the Armenian reality that the Armenian literary criticism could boast. Anahit Bekaryan's research covers this gap.

In her study of the problems posed by research and realization of their complexity, the scholar has approached the task by basing her research on the meticulous study of primary sources and the complex use of contextual, comparative methods, as well as techniques of literary and bibliographic analysis. For the first time in the Armenian literary criticism a complete picture of the poet's prolific work has been presented, along with his Armenian translations, his publications in the Mechitarists' periodicals and the Armenian press in general, as well as the studies conducted by both Armenian and foreign scholars.

The monograph consists of an introduction, three chapters, a conclusion, a comprehensive bibliography made up of not only Armenian but also British, Russian, and French sources, and four appendices.

The first chapter of the book *Byron and the Mechitarists*, dwells on the links between the poet and the Mechitarists in Venice, their relationship described by foreign authors and the Mechitarists' publications of Byron's works. As mentioned above, Anahit Bekaryan has conducted a thorough and detailed research based mainly on primary sources. The work boasts unprecedented research done by foreign authors (British, Russian, French, American, Canadian, Welsh, Italian, Australian, etc) on Byron's Armenian studies and his relationship with the Mechitarists presented in both academic literature and fiction. Some inaccuracies and errors initially published in the Armenian press on the poet's work and activity have also been fixed.

The second chapter *Byron's "Armenian" Letters and Armenian Studies in Europe in the 18<sup>th</sup>-19<sup>th</sup> Centuries* considers the poet's correspondence with a focus on his Armenian letters. Highlighting the poet's *Armenian* letters in the development of the Armenian studies in XVIII-XIX centuries, the author is convincing in her assessment of Byron and his Armenian studies within the European context.

The third chapter of the research *Armenian Literary-Public Thought about Byron* attracts attention with its keenness of observation and addresses the responses of the Armenian poets and periodicals to the great poet reflected through their essays, odes, and criticism. This part also reveals the distinctive features of Byronism reflected in the Armenian poetry and draws parallels between the poet's works and those by Armenian poets.

We would like to conclude with a statement that Anahit Bekaryan's monograph *Byron and the Armenian Reality* is an indispensable contribution to both Armenian and international Byron studies. Its bilingual format and English appendices (comprising excerpts from the poet's Armenian letters and Thomas Moore's *Letters and Journals of Lord Byron*, the poet's preface to the *Armenian – English Grammar* and his translations done from the Armenian poetry) make it a wonderful read for foreign readers who can learn about the poet's Armenian studies and his relationship with the Mechitarists.

The book also boasts a number of painting reproductions, photos, title pages, as well as copies of the poet's handwriting and signature in Armenian.

It is worth mentioning that some parts from the research have also been featured in the author's book *Byron's "Armenian" letters* published in the same year in Yerevan in Armenian and English (Zangak Publishing House, 2013, 280 pages).